

**Փոխմարզպետ նունե Մովսիսյանի ելույթը ՀՀ ՊՆ Մուղնիի զորամասում  
նորակոչիկների երդման արարողության ժամանակ**

/01.08.2014թ./

Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի եւ իմ անունից շնորհավորում եմ նորակոչիկներին, զորամասի սպայական կազմին, հրամանատար, փոխգնդապետ Աշոտ Ֆանյանի գլխավորությամբ, սիրելի ծնողներին:

Սիրելի նորակոչիկներ, երդվեցիք այսօր՝ լինել պաշտպան սյունը հայրենիքի: Պահպանեք ձեր երդումը, քանզի դա է ձեր հաստատակամության ապացույցը: Ձեր ծառայությամբ պատիվ բերեք ձեր զորամասին, ընտանիքին եւ Հայաստանի Հանրապետությանը:

Այսօր մենք պլանավորել ենք այցելություն մարզի ծննդատներ, որտեղ շնորհավորելու ենք բոլոր ծնողներին: Ոչ հեռու անցյալում էր, երբ ծնվեցին ձեր տղաները, սիրելի ծնողներ, եւ փառք Աստծո, որ նրանք առողջ են ու այսօր համալրում են հայոց բանակի շարքերը:

Այս զորամասը սերտ համագործակցում է մարզի կրթօջախների հետ եւ նպաստում ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացմանը: Հարգելի ծնողներ, հավատացնում եմ, ձեր որդիները հոգու կերտման այս դարբնոցում կդաստիարակվեն որպես արժանի զինվորներ: